

մը կու տայ Մեսրոպայ ձեռքը, որով կը յան-
գիմանէ կարնոյ մէջ տիրող ձեռնադրական ան-
կանոնութիւնները, գործողներու մէջ յանուանէ
կը յիշուի կարապետ Եպիսկոպոսը՝ որ կարին
եկած իր ազգականաց քով կը բնակէր, եւ կը
հրամայէ որ կարապետ Արքեպ. Էջմիածին
ղըկուի (անդ, էջ 430—433) «Կոնդակ եւս
պատուիրի վասն օրինազանցութեանց ոմանց առ
կարնոյ Աւագ քահանայսն եւ գլխաւոր իշխանսն
գրեցաւ: Զի ոմանք բաշխօշ եպիսկոպոսք եւ
սեւազլուխք ոչ ունելով զյատուկ վիճակս եւ
զԺողովուրդս, մտանէին ի մէջ նոցա, եւ ան-
խտիր զքահանայս ձեռնադրէին. եւ այն եւս ոչ
ի յեկեղեցւոջ եւ ի հանդիսի, այլ ի տան, եւ
յանկիւնս, եւ ուր կամէին: Եւ ի նոցանէ ձեռ-
նադրեցեալ սուտ քահանայքն եւս ուսեալք ի
նոցանէ, ի տան՝ ի գիշերի եւ ի ծածուկ զխոր-
հուրդս կատարէին: Զոր իմացեալ աւագ քա-
հանայիցն եւ իշխանացն տեղւոյն, ոչ խօսէին
բնաւ. եւ բաց ի չխօսելոյն, այնպիսեաց խաբե-
բայ եւ սուտ եպիսկոպոսաց զգեստն եւ միւռոնն
ինքեանք տային յեկեղեցւոյն իւրեանց: Եւ այս-
պիսի անկարգութիւն գործողաց մինն էր կարմիր
վանից միաբան կարապետ վարդապետն. զի Թո-
ղեալ զվանքն իւր, եկեալ էր ի քաղաքն. եւ ի
տունս ընտանեացն իւրոց բնակէր, եւ այսպիսի
անկարգ ձեռնադրութիւնս առնէր...»

Նաեւ մեր կարապետ Արքեպ. ին նամակ մը
կը գրէ Սիմէոն. «մեղադրանք յիշեցուցանելով
եւ առ երես բերելով զանցեալ չարիսն եւ զան-